# Բաքվի հեռուստատեսությունը հիստերիա է բարձրացնում

**Մարտունի.** Հունիսի 24-ին Խոջավենդ է մտել 3 ավտոբուս օմոնականներով: Նրանք դիմել են շրջանի պարետին, խնդրելով աջակցել իրենց շրջանում անձնագրային ռեժիմի ստուգում անցկացնելու նպատակով: Պարետատունը մերժել է այդ խնդրանքը: Ըստ հավաստի լուրերի, Մարտունու շրջանի արեւելյան մասում օմոնականների կուտակումներ են տեղի ունենում:

**Մարդակերտ.** Երեկ երեկոյան գնդակոծվել է Մարտակերտի շրջանին սահմանամերձ Ումուդլու ադրբեջանական գյուղը: Պետք է ենթադրել, որ ադրբեջանցիները կեղծ կրակոցներ են արձակում իրավիճակը ապակայունացնելու նպատակով:

**Բաքու.** Տեղական հեռուստատեսության բոլոր ծրագրերով սկսվել է հիստերիա Ստեփանակերտի օդակայանում օմոնականների կողմից բռնագրավված Արցախի դպրոցականների համար նախատեսված հասունության ատեստատների եւ 9-ամյա կրթության վկայականների շուրջը: Մեկնաբանությունները թողնելով իրենց խղճին, հարցնում ենք. մի՞թե արցախցի պատանին պետք է մնա առանց ավարտական վկայականի, լրացված... ընդամենը մայրենի լեզվով: ■